

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.4. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության 2004թ. սեպտեմբեր ամսվա մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2004թ. սեպտեմբեր ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Սեպտեմբերին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում:

Նշված քաղաքների 11 դիտակայանների միջոցով վերցվել է օդի 2318 փորձանմուշ: Որոշվել են մթնոլորտն աղտոտող նյութերի կոնցենտրացիաները:

- Երևան քաղաքում սեպտեմբերին վերցվել է օդի 988 փորձանմուշ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, օզոնի, քլորոպրենի և արոմատիկ ածխաջրածինների կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 1.3, ծծմբի երկօքսիդինը՝ 2.2, ազոտի երկօքսիդինը՝ 3.8, ազոտի օքսիդինը՝ 1.2, օզոնինը և բենզոլինը՝ 3.3-ական անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.1, օզոնինը՝ 1.8, տոլուոլինը՝ 1.5 անգամ: Օզոստոս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 3.5, ծծմբի երկօքսիդինը՝ 1.5, օզոնինը՝ 1.3 անգամ, իսկ բենզոլինը և տոլուոլինը բարձրացել են համապատասխանաբար 3.8 և 2.6 անգամ:

Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշու	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.59	0.11
Ազոտի երկօքսիդ	0.35	0.15
Ազոտի օքսիդ	0.18	0.07
Օզոն	0.29	0.1
Բենզոլ	0.987	0.327
Տոլուոլ	0.871	0.262
Քսիլոլ	-	-
Էթիլ բենզոլ	-	-
Քլորոպրեն	-	-

- Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 25 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2 անգամ: Օզոստոս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:
- Վանաձոր քաղաքում վերցված օդի 780 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.7, ծծմբի երկօքսիդինը՝ 1.4 անգամ: Ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.4 և 1.3 անգամ: Օզոստոս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.4
Ծծմբի երկօքսիդ	0.18	0.07
Ածխածնի օքսիդ	7.0	3.0
Ազոտի երկօքսիդ	0.11	0.04

- Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 25 փորձանմուշ: Փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում: Օգոստոս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 3 անգամ:
- Ալավերդի քաղաքում օդի 475 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են 1.3-ական, ծծմբի երկօքսիդինը՝ 10.6 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.9 և 1.4 անգամ: Օգոստոս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 2 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.97	0.53
Ածխածնի օքսիդ	5.0	2.0
Ազոտի երկօքսիդ	0.12	0.05

- Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 25 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2 անգամ: Օգոստոս ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:

**Սակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Սեպտեմբերին մակերևութային ջրերի նմուշառում կատարվել է Փամբակ, Դեբեդ, Չորագետ, Մարցիգետ, Ախթալա, Սևջուր, Քասաղ, Հրազդան, Մարմարիկ, Գետառ, Ազատ, Վեդի գետերից և Երևանյան լճից: Վերցված փորձանմուշներից 8-ում որոշվել է 24 ցուցանիշ, իսկ 15-ում՝ 30 ցուցանիշ (վերցված 23 փորձանմուշում որոշվել է 642 ցուցանիշ):

Փամբակ գետում՝ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածքում, ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 7.2, նիտրիտ իոնինը՝ 7.1 անգամ:

Դեբեդ գետի ավազանից վերցված մյուս փորձանմուշներում գերազանցվել են ամոնիում իոնի և նիտրիտ իոնի ՍԹԿ-ները՝ համապատասխանաբար, 1.3-2.5 և 1.7-3.8 անգամ:

Ախթալա գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում 3.9 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի ՍԹԿ-ն:

Վերցված մյուս փորձանմուշներում գերազանցվել են ԹԿ<sub>5</sub>-ի, նավթամթերքի, ամոնիում, միտրիտ, մագնեզիում, պղինձ և սուլֆատ իոնների ՍԹԿ-ները:

Հրազդան գետում՝ Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում, դիտվել է ԹԿ<sub>5</sub>-ով բարձր աղտոտվածություն (16.6 մգ O<sub>2</sub>/դմ<sup>3</sup>): Այդ հատվածքում դիտվել է նաև ամոնիում իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹԿ գերազանցում 52.6 անգամ: Ամոնիում իոնով բարձր աղտոտվածություն դիտվել է նաև Ազատ գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում՝ ՍԹԿ գերազանցում 11.4 անգամ:

Վերցված մյուս փորձանմուշներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.6-7.6 անգամ (Հրազդան գետում՝ Գեղամավան գյուղի մոտ ընկած հատվածքում, 10 անգամ), ամոնիում իոնինը՝ 1.5-9.3 անգամ, նավթամթերքինը՝ 1.6-3.2, պղինձ իոնինը՝ 9-15, մագնեզիում իոնինը՝ 1.1-1.4 անգամ:

Հրազդան գետում՝ Արզնի ՀԷԿ-ից ներքև ընկած հատվածքում, 1.9 անգամ գերազանցվել է սուլֆատ իոնի ՍԹԿ-ն:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում:

**ՀՀ ազգային վիճակագրական  
ծառայության նախագահ**

**Ս.Մնացականյան**